№ 148 ԵՐԵՔՇԱԲԹԻ 9 ՅՈՒԼԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 9 ՅՈՒԼԻՍԻ № 148

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՅՈՒԼԻՍԻ 1-Ռ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՐՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԱՔՐՔԻՐ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտա)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կոմիսիոնէր դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалъковская, 130, Վիլնօյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Place de la Bourse.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիւարար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կ. Պոլսի հայ թերթերը հաղորդում են, որ Բ. Դուռը Կ. Պոլսի հայոց պարիրքարանից պահանջում է դրսեւորեցնել Մուշի առաջնորդ Ներսէս եպ. Խարախանեանին և Աղերդի առաջնորդ Գէորգ վ. Նալպանտեանին, պատճառաբանելով որ սրանցից առաջինը գիշերային խորհրդակցութիւններ է կատարել տեղական ռուսական հիւպատոսի հետ, իսկ երկրորդը «դրդռիչ» դեր է կատարում և «չափազանցված» լուրեր հաղորդում։ Թիւրք կառավարութիւնը բողոքում է նոյնպէս Բիթլիսի առաջնորդ Սուրէն վ. Գալէմեարեանի՝ Կ. Պոլսի հայոց պարիրքարանին խփած մի հեռագրում կառավարութեան հայհոյէին «անդուէթ» բառը գործածած լինելուն համար։

Ասում են, թէ պարիրքարանը Բ. Դրանն ուղարկած իր պատասխանի մէջ հերքում է վերոյիշեալ առաջնորդներին վերագրված ամբաստանութիւնները և պնդում է, թէ ինքը կատարեալ վստահութիւն ունի իր առաջնորդների վրա։

—

Ռօքսոմոյում հայերին և ուրիշ քրիստոնեաների ջարդի առիթով՝ Իտալիան պահանջեց թիւրք կառավարութիւնից անմիջապէս դադարել իր զօրքերին։

ՄԵԾԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՐՄԲԵՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՍԸՐ)

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

II

Կ. Պոլիս, 26 յունիս

Բարենորոգումներու խնդիրը քաղաքական հաշիներու ծառայեցուցին երիտասարդ-թիւրքերը Համիդէ տարբեր կերպով մը։

Անմիջապէս որ երիտասարդ-թիւրքերը իշխանութիւնը իրենց ձեռքերուն մէջ առին, անոնք ուրիշ փափագ չունեցան, եթէ ոչ նախորդ կառավարութեան յանձնառութիւններէն փրկել օսմ. կառավարութիւնը և կազմել պետութիւն մը, որ իր ամեն արարքներուն մէջ անկախ ըլլար։

Իրենց յաւակնութիւնը, թէ սահմանադրութիւն հռչակելով ամմիջապէս քաղաքակիրթ պետութեան մը վիճակի բարձրացած էին և բոլորովին Եւրոպայի ազդեցութենէ ազատած, սոսկալի արդիւնք մը ունեցաւ և ամբարտաւանացուց և յոխորտ ու կրքոտ դարձուց զիրենք։

Այդ զրդռիչ ուղղութեան անմիջական հետեւանքը եղաւ Բոսնա-Հերսէքի, Բուլգարիոյ խնդիրներուն ծագումը, որ կուգար չափ մը դնել երիտասարդ-թիւրք ինքնահաւանութեան։

Սակայն այն օրէն այսօր դարձեալ անոնք երբէք չուղղուեցան, քաղաքական ու աշխարհավարական գիտակցութիւն և հասունութիւն երբէք ցոյց չտուին՝ շարունակ եւրոպական հեղինակութիւնը և առանձնաշնորհները մերժելով, իբր կառավարական արժանապատուութեան դէմ։

Իրենք միշտ կը խօսէին Զապտնի վրայ, որ երբեմն եւրոպական կառավարութեանց թիւրքիոյ պէս տալէ յետոյ բազմաթիւ առանձնաշնորհներ՝ յետոյ կրցած էր հատատել երկրին մէջ բարւոք և օրինակելի վարչութիւն մը և հեռնեէ նոյնիսկ եւրոպայի հաւանութեամբ ջնջած էր առանձնաշնորհները։ Երիտասարդ-թիւրքերը իրենք սահմանադրութիւն հռչակելով կը կարծէին, թէ ինչ որ Զապտնի համբերատար աշխատութեամբ և մեթոդով 50 տարուան կրցած էր ձեռք բերել, իրենք կեղծ սահմանադրութիւն մը հռչակելով կրնային մէկ օրուան մէջ [illegible] թիւնը և ներքին խնդիրները պակաս չէին, Եւրոպա ամեն տեսակ դիտողութիւններ ընելու ատիթ կունենար։ Երիտասարդ-թիւրքերը իրենց համար սքանչելի կերպով շահագործեցին բարենորոգմանց հարցը, միշտ յայտնելով թէ «բարենորոգում պիտի ընենք, սակայն գործելու մեր անկախութիւնը տուէք, մեր գործերուն մի միջամտէք, ջնջեցէք առանձնաշնորհները»։ Եւ ասիկա գեղեցիկ բանաձև մըն էր, որ շահագործեցին երկար տարի, մինչև որ այլեւս եկան հասան իրերն այնպիսի վիճակի մը, որ անկարելի եղաւ պարակել, և մերկապարանոց տեսնուեցաւ երկրին կատարեալ փտութիւնը։

Հակիւ թէ Եւրոպա կը խլրտէր և կուզէր դարման տանիլ այս վիճակին ուղղակի միջամտութեամբ և ապակեղծոնացման ըստ կզբունքով, երբ բալկանեան ազգերը, աւելի վճռողական, Եւրոպական Թիւրքիոյ հաշուեյարդարութիւնը կատարեցին իրենց զէնքին ուժովը։ Ասիական Թիւրքիոյ խնդիրը այն տարի օրակարգ եկաւ, վասնզի եւրոպական կառավարութիւնները՝ իրարմէ նախանձեալ՝ երկրին արդի վիճակին շարունակութեան մէջ իրենցմէ ամենց մանաւանդ կերպով օգուտներուն հեռապատկերը կը տեսնէին։

Հետեւաբար եւրոպական կառավարութիւնները սկսան շահագրգռուիլ Ասիայով, որ իրենց համար ամեն բանէ առաջ շահաստան մըն էր, և սկսան պահանջներ դնել, օգտուելով անշուշտ ընկի ժողովուրդներու միաւորութիւններէն և ծանր դժգոհութիւններէն, որոնք բնական է թէ չպիտի վատնէին ըսելու։

Բ. Դուռը այն տեսն յարեցաւ տարբեր քաղաքականութեան մը և ընդգրկեց ուրիշ բանաձև մը, որ իր տեսակին մէջ իբր հնարք շատ արհամարհելի չէ։

Բ. Դուռը սկսաւ յայտնել Եւրոպայի սա մտքը. «Զիս փրկեցէք, ժամ առաջ հաշուեյարդարութիւնը ապահովելով։ Բարենորոգումի պէտք կայ, պիտի ընեմ, սակայն դրամ չունիմ։ Օգնեցէք մեզի դրամ տալով, մենք արդէն գիտենք մեր ցեղն ընել»։

Այս ձեւին վրայ երկար տեսն մնալու ատիթ չունեցաւ Բ. Դուռը, վասն զի Եւրոպա, այս անգամ, կերեւայ թէ, ուրիշ կերպով խօսիլ սկսած էր և յայտնի անվստահութիւն ցոյց կուտար հանդէպ Թիւրքիոյ, ոչ հաւատալով անոր բարենորոգումներ գործադրելու խոստումին և ոչ ալ դրամ փոխ տալով, մինչև որ չերաշխաւորուի թէ իր տուած դրամին հատուցումը և թէ երկրին խաղաղութիւնը, իբր հաւատք անտեսական կեանքի վերազարթման, որ ուրիշ կերպով չէ կարելի ձեռք բերել, եթէ ոչ բարենորոգումները եւրոպական հակակշռի տակ առնելով։

Երիտասարդ-թիւրք մտայնութեան համար այս առաջարկն ու միջամտութիւնը մահացուցիչ հարուած մըն էր, ուստի իրենց բոլոր կորովը կը գործադրեն մերժելու համար եւրոպական կօնտրօլը և կը բորբոքին անոր դէմ սատիկ կերպով ու զայրոյթով, և անոր առաջն առնել կը կարծեն հիմա աշխարհի ամեն կողմ յայտարարելով, պաշտօնապէս հռչակելով, թէ բարենորոգմանց գործադրութեան սկսած են և թէ սա բաները ըրած են, մինչդեռ իրականութեան մէջ ոչինչ ըրած են և ընելու ալ կամք չունին։

Եւրոպական ուղղակի միջամտութեան տեղի չտալու համար, եւրոպացի պաշտօնեաներ կընտրեն կամովին և անոնց պաշտօնեներ կուտան, սակայն չեն ընդունիր, որ զանոնք Եւրոպա ինքն ընտրէ։

Ասով Թիւրքիոյ անկախութեան սկզբունքը և արժանապատուութիւնը փրկուած կըլլայ և միանգամայն կը ներկայանայ բաց դուռ մը, ուրիկ կրնան օր մը խոյս տալ։ Կրնան օր մը դադրեցնել այդ եւրոպացի պաշտօնատարները առանց գործ ունենալու եւրոպական կառավարութեանց հետ։

Հիմա իրենց բոլոր ջանքերը կեդրոնացուցած են կօնտրոլէ ազատելու համար և ասոր համար նոյն իսկ հայոց սպառնալիքներ ընելու չեն քաշուիր հրապարակով։

Հայորդի

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ Ա.ԶԳ. ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Կ. Պոլսում յունիսի 21-ին կայացել է թիւրքահայոց ազգ. ժողովի նիստը, որը գլխաւորապէս զբաղվել է թիւրքահայերի՝ իրանց ընագաւառից արտագաղթելու դէմ միջոցներ գտնելու հարցով։

Վահ. Փափազեան յանուն վարչութեան խօսք առնելով ասում է. «Առնուած տեղեկութիւններէն ստուգուած է, թէ Բղէի պէս [illegible] մէկ օրուան մէջ 100 հոգի գաղթած են։ Երզնկայէ՝ ոչ շաբաթուան մէջ 1000 հոգի մեկնած են։ Դիտելի է, որ նախորդ բէժիմի մէջ, երբ պայմաններն աւելի անտանելի էին, գաղթողներու թիւը աւելի քիչ էր։ Այսպէս՝ վիճակագրութիւններով կը հաստատուի, թէ 1903-էն 1907 չորս տարուան ընթացքին դէպի Ամերիկա գաղթած են 9921 հոգի, մինչ 1908-էն մինչև 1913 շուրջ 20,000 հոգի մեկնած են երկրէն։ Ներկայ 1913 տարւոյն 2000 հոգի մեկնած են։ Այս աղէտին առջեւն առնել կարեւոր է, վասն զի ասիկա մեզի համար պարզապէս գոյութեան խնդիր մըն է։ Ձիրդ է թէ այս հոսանքին գլխաւոր պատճառն է տնտեսական պայմանները և տիրող անապահովութիւնը, սակայն պէտք չէ մոռանալ եւ կենդանի պարզ է, թէ ինչ ընդունելի գրգռեցին հայերը, որոնք ճարահատ կը մեկնին, ամեն բան լքելով։ Վարչութիւնը մատնեց ս. պատրիարք հօր անունով և վարչութեան որոշումով շրջաբերական կոնդակներ ցրուել և յորդորել, որ չգաղթեն։ Սակայն մատնեցինք ազգ. ժողովին ալ դիմել և խնդրել, որ ինքն ալ արտակարգ միջոցներ խորհի այս չարիքին առաջքն առնելու համար»։

Հմայեակ եպ. Դիմաքսեան.—Մենք ապրելու համար այն վիճակին ենք հասած, որ կեանք կը մուրանք։ Խեղճ հայ ժողովուրդը արցունքով կը թողու հայրենի օջախները, դիմելու համար օտարութեան։ Գաղթականութիւնը չարդէ աւելի սոսկալի է և մեր գոյութեան կը սպառնայ։ Ազգ. ժողովը պէտք է յոյս տայ այս ժողովուրդին և խրախուսէ, որ պահ մը ևս համբերատարութեամբ սպասեն և պինդ փարին իրենց հայրենի աւանդութեանց։ Մամուլն ալ կը՝նայ օգտակար ըլլալ, խրախուսելով որ դէթ այս օրերուն չգաղթեն և սպասեն հայոց խնդրանքներուն նկատի առնուելուն։ Մեր խնդրանքները շատ չափաւոր են. կեանքի, պատիւի և ինչքի ապահովութիւն միայն կը պահանջենք, ինչ որ եթէ տրուի, արդէն գաղթող չըլլար։

Ե. Շահրիկեան.—Սև ծովէն եկող բոլոր շոգենաւերը գրեթէ լեցուն են հայ գաղթականներով, որոնք արտասահման կերթան չկրնալով տակալ տիրող պայմաններուն։ Այս կերպով սակայն հայ ժողովուրդը պարզապէս անձնասպանութեան կը դիմէ, փը՝ճացնելով իր պահանջները և իրաւունքները։ Ցորդորները օգուտ չունին, սակայն գիտնալ պէտք է թէ վարչութիւնը մինչև հիմա ի՞նչ ըրաւ այս վտանգին առաջն առնելու համար։ Կրցա՞ւ ըսել թէ ինքն յոյսերունի և հայ ժողովուրդը ինքն ալ պէտք է համբերէ տեսնելու համար պակումը այս յոյսերուն։ Կոնդակին որոշումը շատոնց տրուած էր. եթէ վարչութիւնը օգտակար կը դատէր այդ որոշումը, ինչու ձգձգեց գործը և չդրկեց։

Վ. Թէքէեան գաղթելը կոտրածից աւելի աղէտաբեր է համարում. և որովհետև գաղթականութեան մի պատճառն էլ երկրի տնտեսական անհանդուրժելի վիճակն է, ուստի պէտք է ամբողջ հայութիւնն կըն է, բոլոր բարեսիրական մարմիններով և մանաւորապէս՝ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան հետ միասին հանդիսաւոր մի կոչ ուղղել, որպէս զի օգնութեան ձեռք կարկառեն հայաշնակ գաւառների յուսահատած ժողովրդին։

Ներ. վ. Բէրտահճեան.—Կ. Պոլսոյ մէջ շոգենաւային գործակալի պաշտօնով զբաղող բազմաթիւ անձերու դիմում ընելով կըրցանք ստուգել, թէ շաբաթը 200 հոգի կը մեկնի մի՛ջին հաշուով։ Այս կերպով տարին 10,000 հոգի կը մեկնին երկրէն և կը դատարկացնեն գաւառները, մանաւանդ երիտասարդները, որով անճիտումը կը սկսի։ Ես կը ճանչնամ 40—50 տունոց հայ գիւ[illegible] տղայ կը ծնի, մինչ քառասունը մահ կը պատահի։ Աղջիկները սովորաբար կը մնան առանց ամուսնի, վասն զի երիտասարդները կը մեկնին, և կիները կը զրկուին իրենց ամուսիններէն և ընտանեական պահանջներու տեղի տալով կը մղուին անբարոյութեան։ Գաղթելու մանաւանդ կը տիրէր Հայաստանի մէջ նոյն իսկ հին ըժիմին, և 14 տարեկան պատանիներ սահնագլուխը կանցնէին նոյն իսկ իրենց կեանքը վտանգելով։ Իմ կարծիքովս բարոյական միջոցները օգուտ չունին, այլ պէտք է յոյս ներշնչել ապագայ գեղեցիկ օրերու։

Հ. Պոյանեան.—Գաղթը կը նմանի թոքախտի մը, որ չարդէն աւելի կը սպառնայ ազգին։ Եթէ հին ըժիմին գաղթողները նուազ եղած են, պատճառն այն է, որ գաղթելու արգելքներ կային։ Այն ազգը, որ տառապանքի և անօթութեան չի տակար, ազատութեան արժանի չէ։

Հ. Մօնասարեան.—Գաղթային հարցը հայ ազգին ամենամեծ ցաւերէն մէկն եղած է։ Գաղթականութեան խնդիրը նոյնիսկ հայկական հարցն է, և պարիրքարքն, ազգ. ժողովէն շատ աւելի մեծ ծառայութիւն կը մատուցնէ ազգին խեղճուկ գիւղի մը պարզուկ քահանան, որ կեանքը վտանգելով մինչև հեռաւոր հեռագրատունը կը փութայ օգնութիւն հայցելու համար, պաշարող աւազակներու ձեռքէն ինքզինք ազատելով։ Կառավարութիւնն որ հետամուտ է թիւրքը խնդիրը լուծելու, շատ դրական միջոցներ ունի։ Գաղթականութիւնը անտեսական պատճառներէ առաջ չէ եկած, այլ արուեստական է։ Արհաւիրք կը սփռեն և կը պարտաւորեն գաղթել։ Մեր պայքարը թիւրն շուրջը կը դառնայ, և այդ թիւը պահելու համար կարօտեալներուն օգնութիւն ընել օգուտ չունի։ Գաղթողներն աղքատները չեն, այլ դիւրակեցիկները։ Այս խնդիրը մէկ կերպով կրնայ լուծուիլ։ Ապահովութիւն պէտք է տալ ժողովուրդին։ Մենք մինչև հիմա ինչ ըրինք։ Բաւական չէ ասկէ ըսել «մի գաղթէք»։ Հիմա հեղինակաւոր եկեղեցականներ ալ չունինք։ Կենաց և մահու պայքարի մէջ կը գտնուինք. կամ պիտի ընկնինք, կամ պիտի փրկուինք։ Մը՝տավախութիւններու, վերապահութիւններու ատենը անցած է։ Մեր պայքարը պէտք է արժեցնենք։ Բողոքենք որքան որ կրնանք, որքան որ ուժդին կրնանք։ Հին տեսն պատրիարք և վարչութիւն պատրուակ կը փընտռէին բողոքելով հրաժարելու, հիմա կարծես թէ ամեն ճիգ կը թափեն օր մը աւելի մնալու համար պաշտօնի վրայ։ Վարչութիւնը խակապէս կառավարութենէն յանդիմանագիր կը ստանայ, ինչ որ իրեն համար պատիւ պէտք էր համարէր, սակայն կուզէ անոր նշանակութիւնը՝ պզտիկցնել, վախնալով որ մի գուցէ հրաժարականի յանդգնագործը։

Սերովբէ Նորատունկեան առաջարկել է վարչութեան ծրագրած կօնդակից բացի ուրիշ միջոցների էլ ձեռնարկել. այսպէս՝

ա) Հանգանակութիւն կատարվի։

բ) Աւազակների որոշ անուններ տրվին կառավարութեանը և նրանց ձերբակալութիւնը պահանջվի։

գ) Հրահանգ տրվի առաջնորդներին, որ տեղական մամանաժողովներ կազմելով յորդորեն բնիկ ժողովրդին չը գաղթել։

Յար. Ճանկիլեան առաջարկել է կենտրոնին պատուիրակներ ուղարկել։

Ի վերջոյ Վ. Փափազեան յանուն վարչութեան կրկին խօսք առնելով ասում է. «Գաղթականութիւնը վարչութեան դիտած աստիճանները ծագում կունէ։ Եթէ երիտասարդներն ամենէն աւելի կը մեղադրեն, պատճառն այն է, որ դիտաւորեալ հալածանքներ կան մտաւորականներու և երիտասարդներու դէմ։ Գաղթին բուն պատճառը քաղաքական է։ Ժողովուրդը ամենասանկին տակացեր է և կը տակայ։ Մասամբ ալ կը հալածուին բարեկեցիկները»։

Ապա կարդացվել է հետեւեալ բանաձեւը և ընդունվել միաձայն.

«Այս պահուս հայ բնաշխարհը աւերող խմբական արտագաղթին մասին ազգ. կեդր. վարչութեան գլխաւոր առաջարկը և բերանացի տեղեկութիւնները, ինչպէս և զանազան երեսփոխանութիւնու արտայայտութիւնները լսելէ ետքը. ազգ. ժողովը կոչուէ սոյն մեծ չարիքին առաջքը առնելու համար՝

«ա) Ազգ. կեդր. վարչութեան և ազգ. ժողովին կողմէ բոլոր հայաբնակ գաւառներու ուղղել հանդիսաւոր կոչ մը, յիշեցնելով թէ ներկայիս աւելի քան երբէք հայ ազգը իրաւամբ կրնայ յուսալ իր հայրենի տեղւոյն վրայ իր գոյութեան պայմանները ապահովացման ամենաօրինաւոր բաղձանքներուն իրագործումին, և պէտքը շեշտելով յանուն դարաւոր հայութեան գերագոյն շահերուն՝ մնալու իր պապերուն երկրին մէջ և պաշտպանելու ազգին գոյութիւնը։

«բ) Սոյն նպատակով ղրկել մէկ քանի եկեղեցական և աշխարհական պատուիրակներ, որոնք կենդանի բարբառով ալ նոյն յորդորն ուղղեն ժողովուրդին՝ տեղւոյն եկեղեցական և աշխարհական իշխանութեանց հետ միասին և այդ նպատակով տեղական մարմիններ կազմելով առաջնորդարաններու նախաձեռնութեամբ։

«գ) Կոչ մը ուղղել Պոլիս, գաւառը և արտասահման գտնուող հայ բարեսիրական ընկերութեանց և առհասարակ հայ ժողովուրդի բարեկեցիկ մասին, որպէսզի պարագաներուն համապատասխան ծաւալով հանգանակութիւններ կատարուին Պոլսոյ մէջ ազգ. վարչութեան և գաւառի մէջ տեղական ազգային իշխանութիւններու նախաձեռնութեամբ, գոյացնելու համար գումար մը որ մասամբ բարելաւ գաղթականութեան դիմողներու անտեսական դրութիւնը և միջոց ու կարելիութիւն տայ անոնց՝ զիրենք շրջապատող դժնդակ պայմաններու դէմ, ինքզինքնին պաշտպանելու և հայրենի հողին կապված մնալու»։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳԺՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 և 7 յուլիսի

Աթէնք.—Գլխաւոր շտաբի կառավարիչը հեռագրում է զինուորական մինիստրին. «Կռիւը այ թեւի վրա շարունակվում էր երէկ։ Թշնամին հանձնեց դէպի Նէվրօկօպ։ Մայոր Մազարակիսը հաղորդում է Սէրէսից, որ այնտեղ գտնված է բուլգարական շտաբի արխիվը, որից երեւում է, որ բուլգարներին հրաման է եղել տրված յարձակվելու Պանգայօնի վրա։ Արխիվում գտնված գեներալ Խեսապչիեվի զեկուցագրի մէջ մատնանիշ է տրված յոյների թուլութեան վրա, հաղորդվում է յունական զրահանաւի խորտակման մասին։ Գտնված փաստաթղթերից երեւում է, որ յոյների դէմ գործում են 33,000 հոգի հետեւակ, 4 գունդ արտիլերիական զօրքեր, իւրաքանչիւրը 9 բատալիոնից բաղկացած, և հեծելազօրքի 7 էսկադրօն»։

Առաւօտեան վերադարձաւ Վէնիզէլոսը։

—

Սալոնիկ.—Դէմիր-Հիսար տանող կամուրջը շինված է, գնացքների երթեւեկութիւնը վերսկսված։ Ստացված տեղեկութիւնների համաձայն, յունական բոլոր զօրամասերը շարժվում են Կրէտէնից դէպի Դուբնից։ Յունական աջ թեւը որոշ ընդդիմութեան է հանդիպում բուլգարների կողմից Նէվրօկօպից հիւսիս։

Այս վերջին 2 օրս յունական 7000 զօրք է դուրս եկել Սալոնիկից։

—

Սոֆիա.—Ցոյների դէմ գործող զօրքերի հրամանատարը հաղորդում է, որ Բուպէլի կիրճում տեղի ունեցած ճակատամարտում յունական արտիլերիան, չը նայելով Կարմիր-Խաչի վրա պարզված դրօշակին ու նշաններին, ռմբակոծեց Դէմիր-Հիսարի կայարանում հիւանդանոցը։ Հիւանդանոցի ծառայողների մի մասը փախաւ, իսկ մնացողները հիւանդների հետ միասին սպանվեցին։ Մի քանի հիւանդներ, չը նայելով յուսահատ ջանքերին՝ սողալով դուրս գալու հիւանդանոցից, չը կարողացան ազատվել, որովհետև յոյները շարունակեցին գնդակոծելը, մինչև որ աւերեցին շէնքը։ Կուկուշ մրանելիս յոյները քաղաքը հրդեհելուց առաջ կոտորեցին ամբողջ ազգաբնակութիւնը և կոտրեցին մինչև իսկ թօլիկ եկեղեցու դռները, թէև նրա վրա ծածանվում էր Ֆրանսիական դրօշակ։ Այստեղ յոյները բռնեցին մի քանի բօլգարների, որոնք եկեղեցու մէջ էին ուզում պատսպարվել։ Նրանց մահվան ենթարկեցին մի քանի վարդապետների հետ միասին։ Սէրէսի մօտ ընդհարման ժամանակ սպանվել է մի յոյն քահանայ, որը անձամբ առաջնորդում էր յունական փոքրիկ զօրամասը։

—

Աթէնք.—Պիրէյ եկան անգլիական երեք յածանաւեր։ Սպասում են էլի չորս ականանաւեր։

—

Սոֆիա.—Կաբինէտի կազմի մէջ մտան երեք ազատամիտ ֆրակցիայի ներկայացուցիչները։ Կաբինէտի կազմը հետևեալն է. Բազօսլաւով՝ մինիստր նախագահ, Գենադիէվ՝ արտաքին գործերի և երկրագործական մինիստրի ժամանակաւոր պաշտօնավար, Տօչէվ՝ ֆինանսների, Պեշէվ՝ արդարադատութեան և ժամանակաւորապէս ժողովրդական լուսաւորութեան, Վազով՝ զինուորական, Բակալով՝ առևտրի, Դիվիչով՝ հասարակական աշխատանքների, Մօրֆով՝ ճանապարհների հաղորդակցութեան։

Բումինական զօրքերը ոչնչացրել են Դօլնի Դուբնեակի և Տեւլենի միջև Սոֆիա-Վարդար գծի վրա եղած կամուրջը։ Հեռագրերն ու կայարանը Դօլնի Դուբնեակում փոսվել են։ Պլէվնայի մօտ երկու երկաթուղային կամուրջ քանդված են, հեռագրական հաղորդակցութիւնը խզված է։

—

Բէլգրադ.—Երէկ կէս օրից յետոյ սերբերը գրաւեցին Կուլոն։ Բօլգարները նահանջեցին դէպի Վենդին։ Կուլոն վերցնելուց յետոյ սերբերը անցան բօլգարական սահմանը չորս կէտերում և շարունակում են արշաւել։

—

Բուխարէստ.—Բօլգարական հետևակ զօրքի մի բրիգադա 12 թնդանօթներով անձնատուր եղաւ ռումինական դիվիզային։

—

Սոֆիա.—(Յուլիսի 4-ից)։ Ռումինական հեծելազօրքի մի գունդ, որ գրաւել էր Վառնայում կայարանն ու հեռագրատունը, հեռացաւ քաղաքից։ Վառնա-Սեվաստօպոլ հեռագրագիծը վերականգնված է։ Ռումինական հեծելազօրքը դուրս եկաւ Զերվենբրէգից, յայտնելով ռումինական հետևակ զօրքի շուտափոյթ գալու մասին։ Թիւրքական հեծելազօրքի մի գունդ մտաւ Լիւլէ-Բուրգաս։ Նրա հրամանատարը յայտնեց բօլգարական կոմենդանտին, որ իրան հրամայված է գրաւել քաղաքը, և չը նայելով որ մատնանշվեց թէ Լիւլէ-Բուրգասը երկու կառավարութիւնների մէջ որոշված սահմանագծից արևմուտք է ընկած, այնու ամենայնիւ մեր քաղաքում։ Մանաւոր տեղեկութիւնների համաձայն՝ թիւրքական զօրքերը գնում են Ինիադայի վրա, որ ընկած է Միդիայից հիւսիս։ Ինիադայի ազգաբնակութիւնը փախչում է։ Երկրորդ զօրաբանակի հրամանատարը զեկուցանում է, որ սերբերը հրդեհեցին Բազովիչին ու կոտրեցին ազգաբնակութիւնը։ Բօլգարական Օրէխովօ, Պանիցա, Սամակով և սերբերով գրաւված ու բօլգարներից մաքրված շրջանների գիւղերը աւերել են յոյները։ Բնակիչները հրի ճարակ եղան և կոտրվեցին։ Զորրորդ զօրաբանակի հրամանատարը զեկուցանում է, որ սերբերը հրդեհել են բօլգարական Կավատար ու Նէգօտին գիւղերը։

—

Սոֆիա.—(Յուլիսի 5-ից)։ Ռումինական հեծելազօրքը նորից գրաւեց Վառնան։ Թիւրքական մի զօրամաս գրաւեց Ուզուն-Քէօփրին։ Թիւրքական այն զինուորական-գերիները, որոնց արձակել էին բօլգարները, կազմակերպելով բաշիբոզուկային խմբեր՝ հեծելազօրք, Թրակիան ու կողոպտում են բօլգարական գիւղերը։ Ազգաբնակութիւնը փախչում է։ Միջոցներ են ձեռք առնված կարգապահութիւնը ապահովելու համար։ Նոր կաբինէտը ներկայացաւ ժողովին։ Բազօսլաւովը կարդաց Դանէվի կաբինէտի հրաժարականը ընդունվելու և նորը նշանակելու ուկազը, ապա գիմեց ժողովին խնդրելով նիստը յետաձգել երկուշաբթի օրվայ, որովհետև կառավարութիւնը դեռ ևս չէ մշակել զեկլարացիայի բնագիրը։

Ադրիանուպօլսի զինուորական նահանգապետը զեկուցանում է, որ յոյները յարձակում են գործել երկաթուղային պահակների վրա։ Ցոյները յետ են մղված։ Բօլգարական մի գիւղ վիրաւորված է։

ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՋԱՆԵՐԻ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 և 7 յուլիսի

Հռոմ. — «Տրիբունան» ասում է. «Թիւրք-բօլգարական սահմանը որոշող միջազգային յանձնաժողովը կը գումարվի 4. Պօլսում առաջիկայ շաբաթ և իսկոյն էլ կը սկսի աշխատանքները։ Էնօս-Միդիա սահմանագիծը ընդունված է Լոնդօնի կոնֆերէնցիայում. պետութիւնները չեն կարող թոյլ տալ արձանագրութեան խախտումը։ Պետութիւնների միջև լիակատար համաձայնութիւն է տիրում՝ ստիպելու Թիւրքիային պահպանելու պետութիւնների միջնորդութեամբ ընդունված սահմանագիծը։ Եթէ Թիւրքիան չուզենայ հասկանալ այդ որոշումը և զօրք ուղարկի Ադրիանուպօլսի դէմ, այն ժամանակ, հաւատացած ենք, պետութիւնները չեն զլանայ հաւաքական միջամտութեան դիմել. այդ որոշումը միևնոյն ժամանակ կը խափանէր Ռու-

[illegible]

—

Բերլին.—Քաղաքական շրջաններում հաստատում են, որ շուտով հաշտութիւն կը կայանայ Բալկաններում և առանձին բարդութիւններ չեն սպասում պետութիւնների յարաբերութիւնների միջև։ Այդ համոզմունքը հաստատվում է Վիէննայից և Պետերբուրգից ստացված տեղեկութիւններով։ Աւստրիան համաձայնվեց Ռուսաստանի հայեացքի հետ, որ չը պէտք է թոյլ տալ, որպէսզի մեծ կորուստներ կրէ Բօլգարիան։ Մատնոգութիւն է պատճառում Թիւրքիայի հանդէս գալը։ Նրա դրութիւնը դժուարին է։ Բայց Ադրիանուպօլիսը գրաւելով նա ոչինչ չի շահի ու կը կորցնի Եւրոպայի համակրութիւնը։

—

Վիէննա.—«Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէ», որ քանիցս ընդգծել էր վերջին ժամանակներս Ռուսաստանի և Աւստրիայի միջև համաձայնութիւն կայանելու անհրաժեշտութիւնը, ողջունում է այս տեղ տարածված լուրերը Աւստրիայի, Ռուսաստանի ու Իտալիայի սկզբունքային համաձայնութեան մասին, և նոյն միտքն է յայտնում, թէ շնորհիւ այդ համաձայնութեան Եւրոպան ներկայ մօմենտում խուսափեց խոշոր վտանգից։

—

Վիէննա.—Բերխտոլդի վերջին ունկնդրութիւնը նկատի առնելով, լրագիրները սպասում են վճռական քայլեր Աւստրօ-Ունգարիայի կողմից։ «Դէյլշէս-Ֆոլքսբլատը» նկատում է, որ Մակեդոնիայի աւտօնոմիան և Ռումինիայի պահանջների բաւարարումը մինիմում է, որը Աւստրիան պէտք է աջողեցնի։ «Արբէյտեր Ցայտ.»-ը ասում է. «Ունկնդրութիւնը տեղի է ունեցել զինուորական կուսակցութեան ստիպումով, որին գլուխ է կանգնել գլխաւոր շտաբի կառավարիչը և որը պահանջում է գրաւել Սանջակը»։

—

Բուդապէշտ.—«Պէստի-Հիրլապը», պաշտպանելով Մակեդոնիայի աւտօնոմիան, ասում է. «Սալոնիկի հրէաների պատգամաւորութիւնը անտրամաբանական, բայց աջողութեամբ աշխատում էր Վիէննայում, Լոնդոնում, Հռոմում, Բերլինում և Միացեալ-Պետութիւններում, ձգտելով Մակեդոնիայի ինքնուրոյնութեան»։

ՊԱՆՍԼԱՒԻԶՄԻ ՎԻԺՈՒՄԸ

(Մի էջ նացիոնալիստական ֆրազէոլոգիայի կեղծ յեղափոխականներից)

I

Ողջ քաղաքակրթ աշխարհը ակնապիշ դիտում է բալկանեան արիւնահեղութիւնների ոլորտը վերջանալը, երէկվայ «հողայրենի»-այսօրվայ տրգիլ-կոմիտաճիներ-բան Բօլգարիայի դէմ և ընդհակառակը, Բօլգարիան Յունաստանի դէմ և ընդհակառակը։ Օսմանեան մահիկի դէմ ուղղված շեշտակի նիզակները քանդամ ոխակալների՝ ուղղվում են այժմ իրար դէմ։ «Հողայրական» զինակցումինը սլաւոն և օրթոդոքս պետութիւնների—միևնոյն «արիւնից սերված», միևնոյն «աւազանում կնքված հարազատների»—փոխվել է այժմ լարված սամմանազլխային ընդհարումներով առաջնորդվող թշնամութեան։ Եւ երէկվայ արիւնատութեան բաժակները, էժանագին համբոյրները, ազգային հիմնի գոռ որոտումների ուղեկցութեամբ, ցնորալից օվացիաները՝ «ամենքը մէկի համար, մէկը ամենքի համար» դեմագոգիայով՝ վերածվել են այսօր թունաւոր կրճատոցների, փոխադարձ մեղադրանքների և նախատինքների, իրար ծուռտելու չափ մահացու վրէժխնդրութեան։

Տեսա՞ն կը լինի «եղբայրասպան» կռիւը բալկանեան պետութիւնների միջև, դա մնանգամայն կարևորութիւնից զուրկ մի հարց է ներկայ դէպքում՝ խնդրի սկզբունքային արժէքի տեսակէտից։ Կարևորը ինքը փասան է՝ իր դիալէկտիկական հակադարձութեամբ, «եղբայրական» բարեկամութեան փոխանցումը՝ թշնամական շարախնդութեան։

Ի՞նչ է նշանակում դա։

Դա նշանակում է՝ իր իդէօլոգիական կօլորիտով, որ երէկ բարոյական առաքինութիւնների ուղղափառ աւանդում մկրտված և մինչև վերին զահոյքը իր ցայտուն ալիքները հեռուն տարածած պանսլաւիզմը՝ անխնայօրէն զարնվել է գետնին, վիժել է այսօր անմերի ողբերգութեամբ։

Ո՞րն էր երէկ պանսլաւիստական ուսմունքի բովանդակութիւնը։ Ի՞նչ նուանուեր էին հնչում այն քնարից, որի վրա համալաւանականութեան խրոխտ իդէան էր զբաղել պանսլաւոր իդէօլոգների խայտաճամուկ բանակը՝ եւրօպական արևելքի և հարաւի բազմաթիւ ազգութիւններից։ Ո՞ւմ համար էին և ուր էին քուլա-քուլա վեր ամբառնում ախորժալուր և ընդարմացուցիչ մեղեդիների զիլ արձագանքները։

Պարլամենտական մարդված ֆրազէօլոգները, պրօֆան ժուրնալիստիկան, սեթևեթ ֆելիէտոնիստները և «ցեղային պատուի» գաղափարի էնթուզիազմով խելակորոյս հրապարակային ազդկահարները՝ բալկանեան բարձունքներից մինչև Նեվայի ափերը և

[illegible]

հաւատացնել էին ջանում ողջ աշխարհին, որ բալկանեան պատերազմը մի զուտ «ազատագրական» երևոյթ է, «օրբազան», «անշահախնդիր» մի կռիւ։ Թագակիր պետերից մինչև վերջին սինլքոր կրէատուրը միաբերան աղաղակում էին, որ իրանց՝ Բալկանների՝ պատերազմը քրիստոնէութեան անունով և քաղաքակրթութեան թելադրութեամբ առաջացած մի ձեռնարկ է՝ թիւրքական փանատիզմի և բարբարոսութեան դէմ, իրանց տանջվող եղբայրներին ազատագրելու համար։

Ռուսաստանում, սլաւոնականութեան ամենամեծ ներկայացուցչի լայնատարած երկրում, տիրում էր նոյն խանդավառ ոգևորութիւնը։ Պահ մէկ, կարծես, վերացել էր այն խոշոր անջրպետը, որ բաժանում էր ռուսական քաղաքացիութեան ծայրայեղ բևեռները՝ Միլիւկովից սկսած մինչև Պուրիշկևիչը։ Այո, պանսլաւիզմը՝ իր բնական հրավառութեամբ, աղճատեց բոլոր տարբերութիւնները և դրանց վրայով փայտեայ կամուրջ ձգեց մի ծայրից մինչև միւսը՝ ռուսական ռամկավար կաղետիզմը խուժանական աջակողմի հետ միացնելու համար։ Անշուշտ պանսլաւիստական սֆինքսը ունէր իր պաշտամունքի տարբեր վարիացիաները տարբեր կուսակցութիւնների մէջ։ Եթէ մի Սկիւտար Զերնօգորիային վերապահելու համար Մարկով II-ի և Պուրիշկևիչի կուսակցութիւնը կդամակերպում էր խաժամուժ ամբոխից ազիկ թափօրներ Նեվսկիի վրա և նախապնդի թունաւոր խօսքերն ուղղում Աւստրիայի հասցէին բացարձակ դիմնատարայությամբ, ապա միւս չափաւոր կուսակցութիւնները, հէնց ռուս կադետիզմի թէօրետիկները չէին քաշվում մի աւտարօ-սերբիական կամ աւտարօ-չերնօգորական կոնֆլիկտ սեպել որպէս համամասնականութեան եւ համազերմանականութեան անտագոնիզմի արգասիք, ու դրա տոիթով ձեռնոցներ նետել մահուլի էջերում՝ Վիէննայի և Բերլինի իրանց հերթին կատաղած պատենատար պանդերմանիստներին։ Դեռ վերջերս, նախքան բալկանեան դաշնակիցների թշնամական տրամադրութիւնների բացարձակ բռնկումը իրար դէմ, Միլիւկովը դատապարտական շրջապտոյտ էր կատարում ռուսական զանազան քաղաքներում և ամենուրեք «հերոսական» զովքը երգում բալկանեան ապստամբների, որպէս «իսկական ազատագիրների» քրիստոնէական սլաւոն տարրերի։ Բալկանեան համաբարկերի տաք շրջանում, երբ պանսլաւիստների ոգևորութեան փրփուրը հասել էր զենիթի բարձրութեան, Դօրօշևիչը չէր խուսափում իր գերատիճան տենդենցիոզ ֆելիէտոններում՝ սլաւոն բարձրկին ու գթութեան քրօջը յանձնարարել, որ նրանք «ազատագրութեան կռիւ» «սրբազան» [illegible] կոչումային (պրօֆեսիոնալ) որևէ պարտականութիւնից՝ թշնամական բանակից գերված վիրաւորի վէրքը փաթաթելու և բուժելու։ Ոչ, ամենից առաջ և ամեն բան սլաւոն «եղբայրների համար», միմիայն նրանց համար...

Նման անհամ ծայրայեղութիւնները սովորական էին ամեն քայլափոխան՝ պատերազմի տաք շրջանում, մանաւանդ համարատարած հանգանակութիւնների ժամանակ՝ «ազատագիր» սլաւոն «եղբայրների համար, որոնց մասնակցում էին նաև շատ միամիտ հայեր, երևի չը ճանաչելով կամ չմոռանալով ուրիշ ազգային-հասարակական կարիքներ՝ իրանց «առատացած» գանձարանից բաժին հանելու համար։

B. Intimus

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 և 7 յուլիսի

Պարիզ.—Պալատը 358 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 204-ի ընդունեց զինուորական երեք-ամեայ ծառայութիւնը վերականգնելու օրէնքը։

—

Լիսաբոն.—Անկարգութիւնների ըստանալիքից դրված գիւղերը զօրքերը ռազմական պատրաստութեամբ սպասում էին։ Կալանաւորված են մի քանի զինված անձեր։ Ոստիկանութիւնը տեղեկութիւն էր ստացել, որ զանազան մահափորձեր են լինելու ռումբերով։ Այսօր առաւօտեան փողոցներում երևացին կասկածելի աւտոմոբիլներ, որոնք կալանաւորվեցին իսկոյն։ Միաժամանակ զօրանոցների մօտերքում յայտնվեցին կասկածելի խմբեր։ Նրանցից մէկը ռումբ նետեց, սպանելով մի զինուորի և վիրաւորելով միւսին։ Մի ուրիշ տեղ արձակված գնդակից վիրաւորվեց պահակը։ Աւտոմոբիլներում եղողները կալանաւորվել են։ Աւտոմոբիլներից մէկում գտնված է մի կողով ռումբերով։ Նաւատու համազգեստով ծովային զօրքի զօրանոցները մտնող կողմնակի մի անձի մօտ գտել են ռումբ։ Այժմ քաղաքում խաղաղ է։

—

Սուէց.—Շէյխ Իդրիսը ընդհատեց իր բանակցութիւնները օսմանեան պատգամաւորի հետ հաշտութիւն կայացնելու մասին։ «Համիդիէ» յածանաւը գնաց Եմէնի ափը ապստամբութիւնը ճնշելու նպատակով։

—

Հռոմ. — Ստեֆանիի գործակալութիւնը հրատարակում է Բէնգազիից գեներալ Բրիկօչիից ստացված հեռագիրը, որով հաղորդում է նա, թէ գեներալ Սալտիի դիվիզիան ապստամբների դէմ ուղարկած փայլուն յաղթութիւնից յետոյ կատարեալ պարտութիւն պատճառեց թշնամուն, տիրեց նա Մդանարեան դաշտին, խլեց թնդանօթներ, գնդակաձիգներ, շատ հրացաններ, ռազմամթերքներ և ուռեստի պաշարներ։ Իտալացիներից վիրաւորված են մօտ 30 հոգի։ Թշնամին անագին կորուստ ունեցաւ։

—

Աթէնք.—Արտաքին գործերի մինիստրութեան վերատեսուչ Լեվիդիսը և Դրագումիսը գնում են Կ. Պօլիս՝ խաղաղութեան դաշնագիրը ստորագրելու համար։ Այդ գնալը կապ չունի ներկայ պատերազմի հետ։

—

Պօղտ-Սաիդ.—Լրագիրների ասելով, Թիւրքիան զիջում է Եգիպտոսին Թառոս կղզին։ Եգիպտոսը լիազօրում է Անգլիային նրա վրա ծովային կայան շինելու։

ԳՈՐԾԱԳՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 և 7 յուլիսի

Լիս.—Գործադուլարարների անկարգութիւնները սպառնալի բնոյթ են ստանում։ Զօրքերը զօրանոցներում և ռազմանաւերի վրա պահվում են պատրաստ։ Ոստիկանութիւնը եռանդով ցրում էր գործադուլարարներին, որոնք արգելք էին լինում առևտրին և ջարդուփշուր անում կրպակների ապակիները։ Գործադուլարարները դիմադրութիւն էին ցոյց տալիս քարեր նետելով, որից վիրաւորվել են շատերը։ Աբերդինից զօրքեր են պահանջվել։

—

Դոլլ. — Գործադուլարարների թիւը հասնում է 10,000-ի։ Գործադուլարարները դադարեցրին աշխատանքները նաւաշինարաններում, ուր ոստիկանութիւն էր կենտրոնացված աշխատող բանուորներին պաշտպանելու համար։

—

Լօնդ.—164 գործարաններում գործադուլ են արել 55,096 բանուոր և աշխատանքները վերսկսել են 8,665 բանուոր 115 գործարաններում։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԻԵԼԲՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

6 և 7 յուլիսի

Շանխայ. — Ապստամբների պարագլուխները անկախ յայտարարեցին Չինական քաղաքը, բայց անաջող, որովհետև Սունեատսէնը չուզեց միանալ նրանց։ Եկան անգլիական մի քանի ռազմանաւեր ևս։ Շանխայի և Վուսանի ամրոցներն ապստամբների ձեռքումն են, որոնք գրաւել են արդէն մի քանի ռազմանաւեր։ Մի յածանաւ ենթարկվեց գնդակահարութեան։ Շրջակայքում գիշերը լսելի են լինում հրացանաձգութեան ձայներ։ Օտարերկրեայ կօնցեսսիաներում խաղաղ է։ Նանկինում դրութիւնը լուրջ է։ Սպասում են, որ անկարգութիւններ կը սկսվեն, եթէ խռովարարները գան Նանկինի վրա։ Չինացիները հաղորդում են, որ գեներալ Խուանսինը եկաւ Շանխայ։

—

Հանգկանգ. — Կանտոն նահանգի գեներալ-նահանգապետը յատուկ թռուցիկով յայտնում է, որ Կանտոնը բաժանվեց կենտրօնական կառավարութիւնից։ Կանտոն նահանգի խորհուրդը իրան զլխաւոր հրամանատար ընտրեց։ Նա կը վարէ զօրքերը Իւանշիկայի դէմ, որովհետև վերջինս հանապակապատութիւնը դէպի կորուստն է տանում։

—

Պէկին.—Լուրերի համաձայն, հարաւային զօրքերը գրոհ են տալիս Շանխայի զինանոցի վրա։

—

Պէկին.—Լուր է պատում, որ շուտով կը սկսեն կալանաւորել հարաւի ապստամբութեանը մեղսակից օպոզիցիայի անդամներին։ Նացիոնալիստ-պատգամաւորներից շատերը շտապեցին դէպի հարաւ։ Զինական քաղաքում բազմաթիւ կալանաւորութիւններ են կատարված. գրաված են 20 ռուբլի։ Մայրաքաղաքի պաշտպանութեան համար ամբողջ ոստիկանութեան պետ է նշանակված մինիստրների խորհրդի նախագահ Զժաօբինգիւնը, իսկ վերջինիս պաշտօնը վարելու է ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը։

—

Տօկիօ.—Զինատանում սկսված յուզմունքները պատճառով Բաւշիկայի կողմից Եսսօնիա ուղարկված Սունբաօշին և Լիշիպան ուղևորվեցին Պէկին։

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 25 յունիս

Երաշտ է, յունիսեան արևը կայրէ, կը մրրկէ և կը սպառնայ խանձել, չորցնել ամեն բոյս և կենդանութիւն։ Տարօնի երկրագործ ժողովուրդը արցունքոտ աչքերը դէպի երկինք յառած կաթիլ մը անձրև, ցող կաղերսէ, բայց անձրև չկայ ու չկայ...

Գարնանային երկարատև հեղեղները քանդեցին երկրագործին տունը. մայիս ամիսն այնպէս անձրևային անցաւ, ինչպէս այլ տարիներու ապրիլն էր, և ժողովուրդին ցանքսերը մնացին վանիկ (տհաս), ու այսօր այս վանիկներն են, որ երկարատև երաշտի պատճառով սով կը սպառնան ժողովուրդին։ Ժողովուրդն աւելի ահ ու դողի մէջ է, երբ ամեն կողմէ կը լսուի մանաւանդ մարախի առաւոր արշաւանքը, որուն դէմ Թիւրքիոյ քայքայուած իշխանութիւնները իրենց ապեւեան դանդաղկոտութեամբ անզօր են։

Երկրագործ ժողովուրդին ամեն ինչը իրար է խառնուեր, երբ այս երեք ամիսներու մէջ պիտի լմնցնէ իր ամարային բոլոր աշխատութիւնները։

Խիստ ցաւալի է սակայն, որ գիւղացին՝ շնորհիւ թիւրքական դժոխային բէժիմին և ընդհանուր ալան-թալանի՝ չի կրնար համարձակ գութան լծել իր խոպան մնացած արտերը հերկելու, վասն զի ծանր գութան վարելու յարմար ասենը գիշերն է, որ ատեն սակայն քիւրդերը հեծեալ գունդով կը շրջին գաշտերն ու լեռները խեղճ հողագործ ժողովուրդը կողոպտելու և ահ ու սարսափի մէջ պահելու։ Այդ պատճառով՝ գիւղացիք, ստիպուած, ոչ միայն հեռաւոր վայրերը գութան չեն կարող տանիլ, այլ նոյն իսկ իրենց տաւար-ոչխարն ալ, այս անասնելի շրջանին, կը փակեն տաք գոմերու մէջ, օրմէ առաջացեր է պաճարախտ (գաբաղ) և չբրկ ըսուած տարափոխիկ սոսկալի հիւանդութիւնները, որոնք հարիւրաւոր զոհեր կը տանին, զրկելով խեղճ գիւղացին իր խիստ աղքատիկ ստացուածներէն...։

Թախիծ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԱՌԱՑԻՆ ՄՏՈՐՄՈՒՆՔՆԵՐ

I

И какія бы волны ни вставали тамъ, въ далекихъ шумныхъ центрахъ,—сюда не скоро донесется ихъ отголосокъ и, приглушенный разстояніемъ, онъ лишь слабо напомнитъ о связи тихаго, затеряннаго уголка съ какимъ-то огромнымъ цѣлымъ, со всей спутанной сѣтью человѣческихъ отношеній.

«Въ Глубинѣ», И. Гордѣевъ.

Դաւառական «Իդիլիան»

Տնտեսական երկարատև, կազմալուծող, աւերիչ տագնապներ, համատարած մահաշունչ կօշմար, յուսակորոյս ապատիա, դարերոր անշարժութիւն, դանդաղկոտութիւն հասարակական մարի և ստեղծագործող ոգու վրա անծայր թմրութեան ու մեռելութեան անջնջելի կնիք—ահա ժամանակակից գաւառի էական բնոյթագծերը։

Մինչդեռ մայրաքաղաքները, շնորհիւ կապիտալիզմի յաղթական ընթացքին, ամեն օր, նոյնիսկ ամեն ժամ սնտեսական և կուլտուրական խոշոր նուաճումներ են ա-

Ամենայն ինչ ի Քրիստոս։

Ամենայն ինչ ի Քրիստոս։

Ամենայն ինչ ի Քրիստոս։

ստուգութեան է ենթարկել նրան ու գտել է, որ նա իւրացնելիս է եղել իբրև Ռէվազովի փոստերը։ Դաղարօվը կալանաւորվել է, բայց իրան մեղաւոր չէ ճանաչել և բացատրել է, որ 2000 ր. իբրև օժիտ է ստացել կնոջ վրայ, 2700 ր. ժառանգութիւն է ըստացել, ուրեմն 4700 ր. մինչև նրա կարողութիւնը հասնում է 18,000 ր.։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մօսկվայում ընակվող Արսէն Բուլդանը մի գեղեցիկ միտք է յղացել և իրագործել։ Նա թարգմանել է առուլ ռուսերէն Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի «Հայոց Եկեղեցին» նշանաւոր աշխատութիւնը, որ արդէն թարգմանված էր ֆրանսերէն, անգլիերէն։

Ռուսերէն թարգմանութիւնը կատարել է Ֆրանսերէնից Բ. Ռունտ և կոչվում է այսպէս. «Армянская Церковь. Ея исторія, ученіе, управленіе, внутренній строй, литургіе, литературе. Ея настоящее».

Գրքի մասին հարկ չը կայ խօսել, քանի որ մի քանի անգամ տուել ենք ունեցել խօսելու թարգմանութեան մասին այս կարող ենք ասել, որ նա կատարվել է հմտօրէն և բարեխղճօրէն։ Ռուսական թարգմանութեան անհրաժեշտութիւնը անհերքելի է, քանի որ մենք մինչև այսօր չունենք մի աշխատութիւն, որ կարողանար ռուս հասարակութեան և կառավարող շրջաններին լիուլի ծանօթացնել հայոց եկեղեցու իսկական դէմքի հետ։ Այդ մեծ պակասը այսօր լրացվում է շնորհիւ հրատարակիչ Արսէն Բուլդանի։ Հ. Ա.

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Տաճար» շաբաթաթերթի № № 10, 11, 12, 13, 14, 15 և 16, Կ. Պոլիս, 1913 թ.։

2) «Կոչնակ» շաբաթաթերթի № № 21, 22, 23, 24 և 25, Նիւ-Եօրկ, 1913 թ.։

3) «Աւետարեր» շաբաթաթերթի № № 22, 23, 24, 25 և 26, Կ. Պոլիս, 1913 թ.։

4) «Շանթ» կիսամսեայ հանդէսի № № 31, 32, 33, 34—35 և 36, Կ. Պոլիս, 1913 թ.։

5) «Кооперативная Жизнь» կիսամսեայ հանդէսի № 11, Մօսկվա, 1913 թ.։

6) «Աղբիւր» ամսագրի № 5—6, Թիֆլիս, 1913 թ.։

7) «Տարազ» հանդէսի № 5—6, Թիֆլիս, 1913 թ.։

8) «Հասկեր» ամսագրի № 6, Թիֆլիս, 1913 թ.։

9) «Նոր-Դպրոց» ամսագրի № № 5 և 6, Թիֆլիս, 1913 թ.։

10) «Տաճար Մանկանց» ամսագրի № № 5 և 6, Կ. Պոլիս, 1913 թ.։

ՄԱՄՈՒԼ

«Հօրիզօն» թերթը խօսելով կառավարութեան այն յայտնի կարգադրութեան մասին, որի հիման վրա հայոց եկեղեցական-ծխական զպրոցների համար ուսուցիչներ հրաւիրելիս պէտք է առնել նահանգական իշխանութեան համաձայնութիւնը և ցաւ յայտնելով, որ Էջմիածինը լուիմինջիկ համաձայնութիւն է տուել կառավարութեան պահանջին, այնպէս որ այժմ թեմական իշխանութիւնը (ընդգծումը մերն է) ստիպված է նրա իրագործման մասին հոգալ»։

Այս խօսքերով «Հօրիզօնը» կամենում է հասկացնել տալ, թէ Թիֆլիսի առաջնորդը մաս չունի այդ լուիմինջիկ համաձայնութեան մէջ։ Բայց դա ուղիղ չէ։ երբ սինոդը տուել է իր համաձայնութիւնը, Մեսրոպ եպիսկոպոսը եղել է սինոդի անդամ, հետևաբար՝ մասնակցել է սինոդի որոշման և այժմ իր տուած համաձայնութիւնն է ի կատար ածում։ Եթէ մեղաւոր է սինոդը, մեղաւոր են նրա բոլոր անդամները։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Պետութիւններին սպառնում է երկաթուղային գործադուլ, որը կը բռնկի 50 երկաթուղիների վրա։ Երկաթուղային բանուորների միութիւնը որոշել է գործադուլ յայտարարել, եթէ երկաթուղային ընկերութիւնները անմիջապէս համաձայնվելու չը լինեն արբիտրաժի աշխատավարձ 15%-ով աւելացնելու համար։ Բաւարարելու դէպքում ընկերութիւնների ծախքերը կաւելանան տարեկան 30 միլիոն ռուբլի։ Գործադուլի առաջն առնելու նպատակով կառավարութիւնը իր հերթին շտապում է արբիտրաժի մասին յատուկ օրէնք անցկացնել։

◆ Համբուրգեան նաւաշինարաններում գործադուլ են արել 18,000 բանուոր։ Պահանջները սնտեսական են։

◆ Գերմանական զօրքի նոր ուժեղացումը ատիթ է տալիս անգլիական կառավարութեանը առանձին եռանդով ամրացնելու իր ափերը։ Մարշալ Ռոբերտսը կոչ է անում կառավարութեանը, առաջարկելով նոր մարակոցներ շինել։

◆ Հօմրուլի մերժման իբրև արձագանք, Իրլանդիայում սկսվել են խլրտումներ։ Կաստելնուսօնում կաթոլիկների և բողոքականների միջև ընդհարում տեղի ունեցաւ. կրակում էին հրացաններով ու ատրճանակներով։ Հօմրուլի հակառակորդները քանդել են կաթոլիկների 22 տներ։ Կառավարութիւնը օգնական զօրքեր ուղարկեց կարգը վերականգնելու համար։ Անգլիական նաւահանգիստներից շատերում պատրաստութիւններ են տեսնում բողոքական կամաւորներ ուղարկելու Իրլանդիա։ Նրանք զինվում են նոր տեսակի հրացաններով։

◆ Լօնդոնի կառավարական շրջաններում գոհունակութեամբ են խօսում Աւստրիայի ու Գերմանիայի դէմ ուղղված Բուլղարիայի ժողովրդական շարժման մասին։

◆ Աւստրիան և Իտալիան դեսպանների խորհրդաժողովում հարց են բարձրացրել Ալբանիայի վրա ժառանգական թագաւոր նշանակելու։ Այդ առաջարկը ուղղված է եռապետական համաձայնութեան առաջարկի՝ կոմիսար նշանակելու դէմ։

◆ Երիտասարդ-Թիւրքերը Պօլսից զաղտնի յանձնարարութիւններ են ուղարկում Աֆրիկա, Հնդկաստան ու Կովկաս։

◆ Ռուսաստանի և Ֆրանսիայի արած առաջարկին յետ՝ կանչելու Լենոս-Միդիայի սահմանից անցած իր զօրքերին, Թիւրքիան պատասխանել է երկու պետութիւնների դեսպաններին, որ ինքը դեռ ևս վերջնական հաշտութիւն չէ կայացրել Բուլգարիայի հետ, ուստի կարող է վերսկսել պատերազմական գործողութիւնները ամենայն րոպէ, մանաւանդ որ եւրոպական պետութիւնների շահերը գրանից ամենևին չեն վնասվի։ Ընդհակառակը, Բ. Դրան կարծիքով, Բուլգարիային անցած երկիրների գրաւումը թիւրքական զօրքերով գրաւելով՝ Եւրոպան կղատվի թիւրքական պարքը Բուլգարիայի վրա փոխադրելու աշխատանքից։

◆ Վերջին լրագրական տեղեկութիւնները նկարագրում են այն բոլոր արհաւիրքները, որ գործում են բուլգարները։ 60,000-ից աւելի ազգաբնակութիւն ունեցող քաղաքի երեք քառորդ մասը այժմ ներկայացնում է արիւնաներկ աւերակ։ Խաղաղ քաղաքացիներին ջարդող ու թալանող բուլգար զինուորները զինված էին ռումբերով։ Բաւականին վնասվածներ կան օտարերկրացիներից։ Աւստրիական հիւպատոսարանը քանդված է, իտալական հիւպատոսը ազատվեց՝ փրկանք վճարելով։ Գերի ընկած համարվող զօյրմանեան նոտարներն ու եպիսկոպոսը գտնված են սպանված՝ ջրհորի յատակում։

◆ Բալկանեան կատաստրոֆը ֆրանսիական ազգաբնակութեան վրա նստել է, բօրսային տատանումների միջոցով, երեք միլիարդ ֆրանկ։ Իրանք ներկայումս պատերազմող կողմերը այս երկրորդ պատերազմում հետևեալ զոհերն են տուել։ Բուլգարիան կորցրել է 70,000 հոգի, Սերբիան՝ 40,000, Յունաստանը՝ 30,000. Եւ դեռ շարունակվում են կոտորածներ։

◆ Սոֆիայից հեռագրում են ռուս թերթերին, որ օպոզիցիան առաջարկ է անելու ազգային ժողովին Ֆերդինանդ թագաւորին գահընկէց անելու մասին։ Բուլգարները ջրասոյզ են արել երեք սեվական ռազմանաւեր, որպէս զի ռումինական նաւատորմի ձեռքը չընկնի։

◆ Ռումինական «Adverul» լրագիրը յայտնում է, որ ռումինները բաղդաւոր են ինքնուրոյն շաւղի վրա դուրս գալու, որովհետև Աւստրիայի բարեկամութիւնը երբէք ոչ ոքի օգուտ չէ բերել։

◆ Թիւրքիան շտապով պատերազմական պատրաստութիւններ է տեսնում։ Փոքր Ասիայից անընդհատ փոխադրում են նոր զօրքեր Ադրիանուպոլսի շրջակայքը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

6 յուլիսի

ՄՕՍԿՎԱ։ Դատաստանական պալատը որոշեց ոչնչացնել Գօրբունովի հրատարակութեամբ լոյս տեսած Լէվ Տօլստոյի աշխատութիւնների ամբողջ երեք հատորը։ Գօրբունովի դէմ յարուցված քրէական գործը դադարեցված է։

ՅԱՐՍԼԱՎԼ։ Սարսափելի շոգեր են անում։ Տաքութիւնը 45 աստիճան է։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՕԴ։ Քաղաքային ոստիկանական վարչութեան մէջ իր կարգնէտում սպանվել է ոստիկանապետ Ֆրիմմերմանը պրիստաւ Կօրչագինի ձեռքով, որ նորերս նահանգապետը արձակել էր պաշտօնից։ Կօրչագինը, ոճիրը գործելով, փնտում է քնինէի մօտ, ուր և կալանաւորվում է։

7 յուլիսի

ՍԻԶՐԱՆ։ Սիբիրից եկող պօստատը գնացքը Բաարակի կայարանում յորդ անձրևի տակ ընկաւ։ Ճանապարհորդները չեն կարողանում դուրս գալ վագոններից։ Ջուրը ծածկում է անիները։ Երթևեկութիւնը դադարել է։

ՉԵՆՍՏՈԽՈՎ։ Վաղը Վարշավայում զինուորական-շրջանային դատարանում սկսվելու է «Վրիժառու յեղափոխականների» աւազակ սխմբին պատկանող 111 հոգու գործի քննութիւնը, որոնց մի մասը մի շաբաթ առաջ փորձ արեց փախչել կալանաւորութիւնից։ Նրանք մեղադրվում են ոստիկանապետ Սչեկուրի վրա սպանելու նպատակով մահափորձ անելու, թաղական վերահսկիչ Զէնկովսկին սպանելու, մի շարք գողութիւններ ու սպանութիւններ գործելու և Գանդկէ գործարանի վերատեսուչ Բօէմսկիի սպանութեան մէջ։ Մեղադրեալների մէջ է մի կին, որը զրկել է սպանելու Բօէմսկիին։

ԿԻԵՎ։ Հարաւ-արևմտեան երկաթուղիների վարչութեան կարգադրութեամբ Ռումինիայի և Բուլգարիայի նաւահանգիստները ուղարկելու համար ապրանքների ընդունելութիւնը դադարեցված է։ Դադարեցված է նաև այն բեռների առաքումը, որոնք արտաքին ուղարկվում են Օդեսսա և սև-ծովեան ափերի քաղաքները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵԹԷ ԴՈՒՔ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԷՔ
ԿԱՊՈՒԹԵԱՄԲ ՏԱՌԱՊԵԼ,
այդ դէպքում նեղացէք Զեզանից։ Զեզ յայտնի պիտի լինի ամենալաւ միջոցը, այն է ՍԿԱՎՈՒԼԻՆԸ։
Նա բուժել է հազարաւոր մարդկանց, կը բուժէ և՛ Զեզ։ ՍԿԱՎՈՒԼԻՆԻ գործածութիւնը շատ հեշտ է։ Նա դեղհատիկների ձևով է, առանց որևէ համի և հոտի։ Նա չէ գրգռում և փխոյնն չէ առաջացնում։ Դուք նրան ընդունում եք երեկոները քնելուց առաջ, նա գիշերվայընթացքում անում է իր ներգործութիւնը և առաւօտեան տալիս նպատակաւոր հետևանք։
ՍԿԱՎՈՒԼԻՆԸ
լուծողական է—
դեղհատիկների մէջ
առանց հոտի
եւ համի
SCAVULINE
A. GABLIN
23, Rue Ballu PARIS
(B. 37764) 1—1

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4. Տէլէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդոնի Pitman և Գարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ըկալ կեանքից։ Առարկաները են. ա) պարտադիր. 1) հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թղթակցութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսդրութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Կայեցագրութիւն, տրաղագրութիւն (ամենապատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Osur լեզուներ. 2) Տպագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (բեմնոգրաֆ և ուր. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դասա-դասա։ Ունկնդիրների թիվ չատութեան պատճառով բաղվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խմբերների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի չէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշուապահներ, օգնական ներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(Ա. Հ. Կ.) 556. 0—1


ՊԱԼԱՍ-ՀՕՏԵԼ
ԼՕԶ
Ղորագոյն առաջնակարգ հիւրանոց
150 շքեղ կահաւորված հարմարներ
1 ր. 50 կ-ից սկսած
Առանձին ուշադրութիւն է դարձված օրինակելի մաքրութիւն, անդորրութիւն և կարգ ու կանոն պահպանելու վրա։
(Ե.2.) (Լ. 12046) 8—2

ՀԱՄԱՑՈՒՑԻՉ ԻՍԿԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ
ՈՍԿԷ ԺԱՄԱՑՈՅՑ
բոյորովին հարկաւոր չէ։ Փոխ. 200 ր. արժեցող ոսկէ ժամացոյցի առաջարկում ենք անմիջական կերպով բերել տալ Բերլինից ֆիրմա. Նոր ոսկուց շինված ժամաց. «ԽՐՈՆՕՄԷՏՐ» անունով, որը թէ ձևի և թէ չքեղութի կողմից չէ սարքերվում ոսկէ ժամացոյցից և արժէ 4 ռուբ.։ Այդ ժամաց., թէ ազամ. և թէ կանացին, շատ տպագեղ է, երկու փականներով՝ ծածկված էլիպտր. մէջտեղում 18 քարտան. ոսկէ հատ շերտով։ ժամաց. մեխանիզմը ամենալաւ տեսակի է, քարերով, լարումը «ԲէմՕնտուար» 40 ժամը 1 անգամ և մինչև բոլորները ստուգված ընթացքով։ Ուղիղ բանելու համար երաշխաւորում են 10 տարով։ Ժամաց. գինը 4 ռուբ., 2 հատ՝ 7 ր. 50 կ., 4 հատ՝ 14 ր. 25 կ.։ Ով մեկանից բերել տալ այդ ժամաց., նա ընդմիշտ շնորհակալ կը մնայ։ Իւրաքանչ. ժամաց. ՀԻՒ կցում ենք. 1) Ոսկէ. շղթայ երկկողմ, կամ կանացի՝ պարանոցային, ֆրանս. խոկ. ոսկուց, 2) Բրելոկ-բինոկլ պարիզեան հետաքրքիր. տեսարաններով և 3) Զարդեղ քսակ ժամաց. համար։ Ճանապարհածախքը, հանկերձ մաքսով, 50 կոպ. (Միայն 75 կ.)։ Պատուէրները ճշգրիտ ուղարկվում են վերագրիչ վճ. և տուանց կանխավճարի։ Գրել կարելի է ամեն լեզուներով, հետևեալ հասցէով, որը կարելի է արտագրել և կամ թէ դուրս կտրել և ամուր կպցնել ծրարի երեսին (փակ նամակներին կպցնել 10 կ. մարկա, իսկ բաց նամակներին՝ 4 կ.)։
Հասցէագրել
Berlin Берлинъ. 92. | I. Strumfeld Klosterstr. № 42
ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ! Կոդծիքներից խուսափելու համար յայտարարում ենք, որ մեր ժամացոյցները իսկական «ԽՐՈՆՕՄԷՏՐ» է և ցիֆերբլատի վրա գրված է «Բերլին ԽՐՈՆՕՄԷՏՐ»։
(2,9,16,25) (B. 38175) 5—3

ԴՕԿՏՕՐ
Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ճարտնակ մ է ընդունել ամեն տեսակ հիւանդների և խորհրդակցութիւններ է կարդում մասնաւորների հետ։ Նոր հասցէն՝ Berlin N. W. Luisenstr. 67. Telephon Amt. Norden. 92—74.
(Ե. ու.) 412. 20—14

ՕԳՏՎԵՑԻՔ ԴԻՊՔԻՑ
Վաճառվում են Յ. Դաղբաշեանի բառարանների
ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ
ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻՍԿՍՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ր., կազմած 9 ր.։
ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻՍԿՍՏԱՐ ԲԱՌ., գինը 6 ր., կազմած 6 ր. 50 կ.։ Երկու բառարանները միասին 12 ր.։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։ Աշխարհաբարի ընական բերականութիւնը նոյն հեղինակի, գինը 50 կոպէկ։ Դիմել՝ A. Дагбашяну. Коргановская ул. № 9. кв. 2 Въ г. Тифлисъ.
(Ե.) 494. 10—3

Ռոմանոս Մելիքեանի էմիգներից
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴ. ԵՐԳԵՐԻՑ
(ՊՐԻՊԹՈՒԹԻՒՆԵՐ)
Առաջին սերիա (in 8)
1) Կոտ ու կէս, 2) Լուսնեակն անուշ, 3) Անձրևն եկաւ, 4) Բինգեօլ, 5) Աղջկերք պար բռնեցէք, 6) Արի Մանան։
Դիմել՝ Կովկասի հայ բոլոր գրավաճառներին. իւրաքանչիւր համար երգը 10 կ.։
(Ե.) 533. 3—2

Սամարղանդի ծխ. դպրոցի համար հարկաւոր է
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
18—20 դասով։ Պատրաստում է երգեցիկ խումբ։ Կը տանայ 600 ռուբ. ռոճիկ, ճանապարհածախս, և կազմած համերգների զուտ արդիւնքից 15%. Դիմել քահանային այս հասցէով. Самаркандъ. Армянскому священнику.

ԽՈՅԹԱՅ գիւղի եկեղ.-ծխ. միդասեան դպրոցի համար հարկաւոր է մի փորձված
ՈՒՍՈՒՑԻՉ
ճեմարանաւարտ կամ թեմականաւարտ, որը ծանօթ լինի և եկեղեցական երգեցողութեան։ Ռոճիկ 500 ռուբլի, լուսաւորութիւն, վառելիք, սենեակ և ճանապարհածախս 15 ռուբլի։ Դիմել՝ Черезъ Туапсе (Черном. губ.) Сел. Гойти Арм. церк.-прихопечительству.
օ.մ. 550. 4—2

„Մշակի" խմբագրատանը
վաճառվում են
հետեւեալ վիպական երկերը.
1) ՋՕՌԻ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի։ 1 ր. —
2) ԻՆՆՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգոյի, թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, ասատգվեստ. վէպ. Կ. Ֆլամարիոնի, թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդոյի, թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՄՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱՍՈՒՐԿ, Ե. Սալիբեի, թարգ. Խս. Ցարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մոպասանի, թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՕԳԻՆ, վէպ. Յ. Սօլոմանի . . . . . —40 կ.
Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը տանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի 25%։
(5) 10—2

ՄԻ ԹԻՒՐՔԱՀԱՅ
ԵՐԻՏԱՍԱՐԴ,
որ գրագէտ է և գիտէ նաև ռուսերէն, ցանկանում է պաշտօն զանազան առևտրական կամ այլ հիմնարկութիւնների գրասենեակներում։ Հասցէն՝ Базарная ул. № 1, д. Мухранскаго, հարցնել Կարապետ Տիգուլեանցին։
(օ. մ.) 557. 3—1

Լոյս տեսաւ
Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ
„ԷՍՔԻԶՆԵՐ"
գիրքը։
187 երես։ ◆ Գինն է 50 կոպ։
Ծախվում է Թիֆլիսի բոլոր գրախանութներում։ (օ. մ.) 542. 5—4

Տաճակերտ գիւղի (Երևանի նահանգ, Նախիջևանի գաւ.) ծխ. դպրոցի համար հարկաւոր է
ուսուցիչ և ուսուցչուհի
Դիմել՝ Баку, Армянское Человѣколюбивое О-во Гарегину Теръ-Степаняну.
(օ.մ.) 549. 2—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный